ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի դեկտեմբերի 4-8-ը Ֆիլիպինների Հանրապետության մայրաքաղաք Մանիլա կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արևհատ Պողոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆիլիպինների Հանրապետություն, մայրաքաղաք Մանիլա, 2023թ. դեկտեմբերի 5-7-ը

4. Հրավիրող կողմը.

Ասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Ասիա-խաղաղօվկիանոսյան ճանապարհային անվտանգության դիտակետի (APRSO) տարեկան համաժողովին և Ասիա-խաղաղօվկիանոսյան ճանապարհային անվտանգության տարածաշրջանային սեմինարին մասնակցություն, որը ուղղված էր ամբողջ աշխարհում ճանապարհային անվտանգության հիմնախնդիրներին և մարտադրավերներին:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը մասնակցում էին Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների պետական համակարգի ներկայացուցիչները, ԱԶԲ-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը, ՄԱԿ-ի մի շարք գործակալությունների ներկայացուցիչները, Համաշխարհային բանկը, ճանապարհային անվտանգության ոլորտի մասնավոր հատվածի կազմակերպությունները, հետազոտական և ակադեմիական հաստատությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերությունները

Միջոցառման ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Ճանապարհային անվտանգության գործողությունների տասնամյակի գլոբալ և տարածաշրջանային 2021-2030 թվականների պլանների, ներառյալ 2023 թվականի ճանապարհային անվտանգության վերաբերյալ ԱՀԿ-ի գլոբալ կարգավիճակի զեկույցի լուսաբանումը.
- Ճանապարհային անվտանգության ոլորտի ֆինանսավորման նոր մոդելները և հնարավորությունները.
- Արագության կառավարում և կապը կայունության օրակարգի հետ
- Մասնավոր հատվածի նախաձեռնությունները ճանապարհային անվտանգության ոլորտում.
- Նորարարական տեխնոլոգիաները ճանապարհային անվտանգության ոլորտում
- Ճանապարհային անվտանգության իրավական շրջանակները.
- Գենդերային հեռանկարները տրանսպորտի պլանավորման մեջ
- Էլեկտրական ինքնագլորների անվտանգություն
- Ճանապարհային անվտանգության գործում ճանապարհային ոստիկանության նախաձեռնությունները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ԱԶԲ-ի, ԱՀԿ-ի, ՀԲ-ի, iRAP կազմակերպության, Ճանապարհային անվտանգության գլոբալ համագործակցության, ՄԱԿ-ի Ծրագրերի սպասարկման գրասենյակի ներկայաչուչիչների, շուրջ 33 երկրերի ճանապարհային անվտանգության ոլորտի պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել է ճանապարհային անվտանգության ոլորտում Ասիայի և Խաղաղօվկանոսյան երկրերի մարտահրավերները. որոնք կիսվել են իրենց երկրերում առկա փորձով և հնարավորություններով: Հանդիպումների ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարության փաստաթղթի ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների հավաքագրման և տվյալների փոխանցման հետ կապված Հայաստանում առկա խնդիրները և իրականացվող ծրագրերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում որպես APRSO Հայաստանի ներկայացուցիչ մասնակցել եմ Ասիական Խաղաղօվկիանոսյան ճանապարհային անվտանգության դիտակետի գլխավոր ասամբլեայի տարեկան ժողովին, որի ընթացքում քննարկվել է APRSO-ի կառավարման կանոնադրության մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ Գլխավոր ասամբեայի մի շարք լիազորություններ փոխանցվել են APRSO-ի ղեկավարման կոմիտեին,

փոփոխություններ են տեղի ունեցել նաև ղեկավարման կոմիտեի տարեկան համաժողովների իրականացման ժամկետներում: Նշված փոփոխությունները APRSO-ի անդամ երկրների ներկայացուցիչների կողմից ընդունվել են միաձայն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում ճանապարհային անվտանգության ոլորտի միջազգային կազմակերպությունների և այլ երկրների փորձը օգտակար կլինի Հայաստանում ճանապարհային անվտանգության, մասնավորապես ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության բարեփոխումների իրականացման համար, որոնք կարտացոլվեն Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարության փաստաթղթում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

13.12.2023թ.